

Դատական Գործ N: ՎԴ/3362/05/10

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	22-09-2010
Հայցվոր/դիմող	
Անուն	Սարգիս
Ազգանուն	Թարվերդյան
Հասցե	Արաբկիր 29փ.13/1
Պատասխանող	
Անուն:	ՀՀ ԷՆ մտավոր սեփականության գործակալություն
Հասցե:	Կառավարության 3
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պահանջ:	30.08.10 թ թիվ 15985 ապրանքային նշանի գրանցումը անվավեր ճանաչ պ/մ
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	1.1
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Լրացուցիչ պահանջի վիճակագրության տողի համարը:	
Ամսաթիվ:	22-09-2010
Պետ. տուրք (ՀՀ դրամ):	4000
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	24-09-2010
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	Քրիստինե Մկոյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	դատարանի նախաձեռնությամբ <Արտաշես> ՍՊԸ ներգրավել է որպես երրորդ անձ 24-09-2010թ որոշմամբ:
Որոշման ամսաթիվ:	24-09-2010

Դատաքննության ամսաթիվ:	20-10-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	08-10-2010
Այլ նշումներ:	նախնական նիստ
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համար:	323
Դատաքննության ամսաթիվ:	02-11-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	20-10-2010
Այլ նշումներ:	դատաքննություն
Ժամ:	16:00
Նիստերի դահլիճի համար:	323
Հայցի լուծման ամսաթիվ:	05-11-2010
Հայցի լուծումը:	Բավարարվել է
Հոդված	
Հոդված	ՀՀ ՎԴ 59-րդ 112-115-րդ ՀՀ ՔԴ 130-132-րդ ՀՀ ՂՕ 35ՕՐ Կետ 2
Հակընդդեմ հայցի լուծումը :	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	
Դատական ակտ:	<p>Գործ թիվ ՎԴ /3362/05/10</p> <p>Վ Ճ Ի Ռ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «5» նոյեմբերի 2010թ. ք. Երևան</p> <p>Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը՝ նախագահությամբ՝ դատավոր Քրիստինե Մկոյանի</p> <p>քարտուղարությամբ՝ Լիլիթ Մնոյանի, մասնակցությամբ՝ հայցվորի ներկայացուցիչ Արթուր Դավթյանի, պատասխանողի ներկայացուցիչ Արայիկ Բաբայանի,</p> <p>2010 թվականի նոյեմբերի 2-ին, դատարանում, դռնբաց դատական նիստում, քննելով վարչական գործն ըստ հայցի Սարգիս Թարվերդյանի ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «Արտաշես» ՍՊԸ՝ 30.08.2010թ. թիվ 15985 գրանցման համարի տակ գրանցված ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,</p> <p>Պ Ա Ր Ջ Ե Ց</p> <p>1. Գործի դատավարական նախապատմությունը.</p> <p>Սարգիս Թարվերդյանը 22.09.2010թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործառնականության՝ 30.08.2010թ. թիվ</p>

15985 գրանցման համարի տակ գրանցված ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

ՀՀ վարչական դատարանի 24.09.2010թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ սույն վարչական գործով դատավարության մեջ որպես երրորդ անձ է ներգրավվել «Արտաշես» ՍՊԸ-ն:

Դատարանի 20.10.2010թ. որոշմամբ գործը նշանակվել է դատաքննության:

Դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 05.11.2010թ.:

2. Հայցվոր կողմի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումով հայցվոր Սարգիս Թարվերոյանը դատարանին հայտնել է, որ ինքը 09.02.2010թ-ին «ARARAT JUICE» ապրանքային նշանի գրանցման հայտ է ներկայացրել ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն:

02.03.2010թ-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության կողմից «ARARAT JUICE» ապրանքային նշանը գրանցվել է թիվ 15064 համարի տակ: Ապրանքների և /կամ/ ծառայությունների ցանկը՝ որն իրենից ներկայացնում է հյութ՝ «նեկտար» մրգային ըմպելիքներ՝ օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր՝ ըստ նշանների գրանցման ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման, դասվել է թիվ 32 դասին:

Հետագայում պարզվել է՝ որ 25.05.2010թ-ին ներկայացրած հայտի հիման վրա ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության կողմից 30.08.2010թ-ին թիվ 15985 համարի տակ գրանցվել է «ARARAT» ապրանքային նշանը՝ որի սեփականատերն է «Արտաշես» ՍՊ ընկերությունը: «Արտաշես» ՍՊ ընկերության անվամբ գրանցված «ARARAT» ապրանքային նշանը գրանցվել է ապրանքների և ծառայությունների դասակարգման թիվ 29 դասի հատապտղային և բանջարեղենային պահածոների և 32 դասի մրգային հյութերի համար:

Ստացվում է՝ որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության կողմից գրանցվել են երկու ապրանքային նշաններ՝ որոնցից երկրորդը՝ թիվ 15985 գրանցման համարով ապրանքային նշանը, գրանցված 30.08.2010թ. շփոթելու աստիճան նման է ավելի վաղ գրանցված ապրանքային նշանին՝ որը գրանցված է նույն ապրանքների համար՝ տվյալ պարագայում երկու ապրանքանիշերն էլ, ըստ նշանների գրանցման ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման՝ գրանցված են թիվ 32 դասին պատկանող հյութերի համար:

Հայցվոր Սարգիս Թարվերոյանը գտնում է՝ որ «Արտաշես» ՍՊ ընկերության անվամբ գրանցված «ARARAT» ապրանքանիշը նույնական նման է ավելի վաղ գրանցված «ARARAT JUICE» ապրանքային նշանին՝ և դրանով մակնշվող ապրանքները և (կամ) ծառայությունները նույնական կամ նույնատիպ են՝ ուստի հանրության մեջ շփոթության առաջացնելու վտանգ է պարունակում:

Վերոգրյալից ակնհայտ է՝ որ մտավոր սեփականության գործակալության կողմից «Արտաշես» ՍՊ ընկերության անվամբ «ARARAT» ապրանքանիշը շփոթելու աստճան նման է ավելի վաղ գրանցված «ARARAT JUICE» ապրանքային նշանին և դրանով մակնշվող ապրանքներն ըստ էության նույն են՝ ինչ ավելի վաղ գրանցման մեջ նշված ապրանքները՝ ուստի հանրության մեջ շփոթության առաջացնելու վտանգ է պարունակում:

Ինչ վերաբերում է «ARARAT» ապրանքանիշի գրանցմանը 29-րդ դասի ապրանքների համար՝ ապա այդ մասով ևս առկա է շփոթաթյուն առաջացնելու վտանգը՝ քանի որ թիվ 29 դասի հատապտղային և բանջարեղենային պահածոները 30-րդ դասի

նշված ապրանքներին նույնատիպ են՝ «նկատի ունենալով» որ երկու դեպքում էլ օգտագործվում է նույն հումքը՝ երկու դեպքում էլ իրացվում են սպառման նույն ցանցում և դրա նայն բաժիններում որպես հարակից ապրանքներ:

Նշված երկու ապրանքային նշանների շփոթելու աստիճան նմանաթանը պայմանավորված է հետևյալով.

1. «ARARAT JUICE» ապրանքային նշանում «JUICE» բառը բավականին թույլ տարր է՝ «այնքանով» որքանով որ բնորոշում է ապրանքի տեսակ՝ այն է՝ հյութ: Հետևապես տվյալ դեպքում ապրանքային նշանի տարբերակիչ հատկության «բեռն» ընկնում է «ARARAT» բառի վրա: Շփոթության աստիճանի նմանությանն էապես նպաստում է նաև օգտագործված այբուբենը՝ որով գրված են այդ բառերը՝ երկու դեպքում էլ դրանք գրված են լատինական այբուբենի տառերով:

2. «ARARAT» ապրանքային նշանն իր բնույթով համակցված նշան է՝ «ARARAT» բառի հետ օգտագործված է նաև որոշակի պատկերային մաս՝ այն է՝ Արարատ սարի ուրվագիծը՝ ինչը որևէ կերպ չի ազդում ապրանքային նշանի ընկալելիության վրա և դրան չի հաղորդում որևէ այլ իմաստ կամ գաղափար՝ հետևապես սպառողի կողմից այն ընկալվում է սոսկ որպես «Արարատ» բառ իր ուղիղ իմաստով՝ ինչպես ավելի վաղ գրանցվածը:

Վերոգրյալից ակնհայտ է՝ «որ մտավոր սեփականության գործակալության կողմից «Արտաշես» ՍՊ ընկերության անվամբ «ARARAT» ապրանքանիշի թիվ 15985 համարի տակ գրանցումը կատարվել է «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթների խախտմամբ:

Վերոգրյալը հիմք է տալիս պնդելու՝ «որ մտավոր սեփականության գործակալության կողմից «Արտաշես» ՍՊ ընկերության անվամբ գրանցված «ARARAT» ապրանքանիշի թիվ 15985 համարի գրանցումը կատարվել է օրենքի խախտմամբ» այդ թվամբ օրենքի սխալ կիրառմամբ՝ ուստի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ այն պետք է ձանաչել անվավեր:

Սարգիս Թարվերդյանը ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն «ARARAT JUICE» ապրանքային նշանի գրանցման հայտ է ներկայացրել 09.02.2010թ.:

02.03.2010թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության կողմից «ARARAT JUICE» ապրանքային նշանը գրանցվել է թիվ 15064 համարի տակ:

«ARARAT JUICE» ապրանքային նշանը, ըստ նշանների գրանցման ապրանքների և ծառայությունների դասակարգման, դասվել է թիվ 32 դասին:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության կողմից 30.08.2010թ. թիվ 15985 գրանցման համարի տակ գրանցվել է 25.05.2010թ. հայտ ներկայացրած «ARARAT» ապրանքային նշանը:

«ARARAT» ապրանքային նշանը և, ըստ նշանների գրանցման ապրանքների և ծառայությունների դասակարգման, դասվել է թիվ 32 և 29 դասին:

«Արտաշես» ՍՊ ընկերության անվամբ գրանցված «ARARAT» ապրանքանիշը շփոթելու աստիճան նման է ավելի վաղ գրանցված «ARARAT JUICE» ապրանքային նշանին՝ և դրանով մակնշվող ապրանքները և (կամ) ծառայությունները նույնական կամ նույնատիպ են՝ ուստի հանրության մեջ շփոթության առաջացնելու վտանգ է պարունակում:

Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը՝

կարգադրությունը՝ հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է՝ որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով՝ և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն՝ փոփոխելուն՝ վերացնելուն կամ ճանաչելուն: Վարչական ակտը կարող է ուղղված լինել նաև որոշակի անհատական չափանիշներով առանձնացված անձանց որեւէ խմբի: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ա) բարենպաստ վարչական ակտն այն վարչական ակտն է՝ որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման, բ) միջամտող վարչական ակտն այն վարչական ակտն է՝ որի միջոցով վարչական մարմինները մերժում՝ միջամտում՝ ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը՝ որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը: Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա կետի՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը՝ որն ընդունվել է ա) օրենքի խախտմամբ՝ այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները՝ տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները՝ տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ՝ եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Համաձայն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ որպես ապրանքային նշան՝ գրանցման ենթակա չէ այն նիշը՝ որը՝ նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին՝ և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մեջ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում՝ ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը /շփոթելու աստիճան նմանությունը/:

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ապրանքային նշանի գրանցումը կարող է անվավեր ճանաչվել դատարան ներկայացված համապատասխան հայցի կամ իրավունքների պաշտպանության գործով հակընդդեմ հայցի քննարկման արդյունքում կայացված դատարանի վճռի հիման վրա՝ եթե՝ առկա է սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ավելի վաղ ապրանքային նշան՝ և առկա են նաև նույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերից որևէ մեկով նախատեսված պայմանները: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է՝ իրավունքի ինքնապաշտպանությամբ՝ մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելով: Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների

դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք: Ոչ ոք չի կարող գրկվել հավասարության պայմաններում և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ իրավասու «անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքից: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոտնահարելու դեպքում իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ վերականգնելու այդ իրավունքները: Ելնելով վերոգրյալից՝ խնդրել է անվավեր ճանաչել 30.08.2010թ. թիվ 15985 գրանցման համարի տակ գրանցված ապրանքային նշանի գրանցումը: Դատաքննության ընթացքում հայցվորի ներկայացուցիչ Արթուր Դավթյանը, պնդելով վերը շարադրված փաստերը, խնդրեց անվավեր ճանաչել 30.08.2010թ. թիվ 15985 գրանցման համարի տակ գրանցված ապրանքային նշանի գրանցումը:

3. Պատասխանող ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության հայցադիմումի պատասխանով ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունը /այսուհետ գործակալություն/ հայցադիմումի դեմ առարկում է հետևյալ պատճառաբանությամբ.

02.03.2010թ. գործակալության կողմից գրանցվել է «ARARAT JUICE» բառային ապրանքային նշանը ԱԾՄԴ (ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման) 32-րդ դասի ապրանքների համար՝ «հյութ» նեկտար» մրգային ըմպելիքներ, օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր» 09.02.2010թ-ի առաջնությամբ Սարգիս Թարվերդյանի անվամբ» գրանցման համար 15064:

30.08.2010թ. գործակալության կողմից գրանցվել է «ARARAT» բառը պարունակող համակցված ապրանքային նշանը ԱԾՄԴ 29-րդ դասի՝ հատապտուղներ և բանջարեղենային պահածոներ» ու 32-րդ դասի՝ մրգային հյութեր» ապրանքների համար» 25.05.2010թ. առաջնությամբ «Արտաշես» ՍՊԸ-ի անվամբ» գրանցման համար 15985:

Հայցվորի գլխավոր հիմքն այն է՝ որ նշված ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման են միմյանց» մնացած հիմքերը դրա ածանցյալներն են:

Շփոթելու աստիճանի նմանությունը որոշվում է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 12.04.2005թ թից 85-Ն հրամանով հաստատված «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման» ներկայացման և քննարկման կարգի» /այսուհետ կարգ/ համաձայն:

Կարգի 96-րդ՝ 105րդ կետերի համաձայն՝ համակցված նշանները համեմատվում են համակցված նշանների հետ և այն տեսակի նշանների հետ» որոնք ներառված են համակցված նշանի մեջ: Տվյալ դեպքում «ARARAT» բառը պարունակող համակցված նշանը համեմատվել է նաև «ARARAT JUICE» բառային ապրանքային նշանի հետ:

Համաձայն կարգի 97-րդ կետի՝ ապրանքային նշանների շփաթելու աստիճանի նմանությունը կարող է լինել ձայնային (հնչյունային)» գրաֆիկական (տեսողական) և իմաստային (արտահայտած մտքի): Ձայնային (հնչյունային) նմանությունը որոշվում է կարգի 98-րդ

կետում թվարկված հատկանիշներով» այն է՝ 1) համեմատվող նշաններում մոտ և համընկնող հնչյունների առկայությամբ, 2) նշանը կազմող մոտ հնչյունների մոտիկությամբ, 3) մոտ հնչյունների և հնչյունային կապակցությունների միմյանց նկատմամբ դասավորվածությամբ, 4) համընկնող վանկերի առկայությամբ և դրանց դասավորվածությամբ, 5) նշանի մեջ պարունակվող վանկերի ընդհանուր քանակով, 6) նշաններում համընկնող հնչյունային կապակցությունների տեղով, 7) ձայնավորների կազմի մոտիկությամբ, 8) բաղաձայնների կազմի մոտիկությամբ, 9) նշանների համընկնող մասերի բնույթով, 10) նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով» հատկապես բառային արտահայտությունների» այդ թվում ֆիրմային անվանումների մեջ: Այս դեպքում համընկնող վանկերի առկայության կամ մի նշանը այլ նշանի մեջ մտնելու դեպքում նմանության ծագման որոշիչ գործոն է համարվում համընկնող մասերի սկզբնական դիրքը: Շատ դեպքերում նշանների նման ձանաչման հիմք կարող է հանդիսանալ ինչպես սկզբնամասերի» այնպես էլ վերջնամասերի համընկնումը տարբեր միջնամասերի դեպքում: 11) շեշտադրությամբ: Տվյալ դեպքում երկու նշաններից մեկը հնչում է որպես «արարատ»» իսկ մյուսը «արարատ ջույս»: Թեև «արարատ» բառը երկու նշաններում էլ առկա է « միևնույն է հայցվորի նշանը հնչում է որպես «արարատ ջույս» բառակապակցություն կամ մեկ ամբողջական հնչյուն» դրանով իսկ բացառելով շփոթելու հնարավորությունը« ի հակառակ հայցվորի այն պնդմանը» որ «ջույս» բառը թույլ տարր է: Այսինքն «ջույս» բառի առկայությունը, պետք չէ մոռանալ նաև վիճարկվող նշանի պատկերային մասի առկայության մասին» բավականին տարբերություն են մտցնում նշանների մեջ և այն չի հանդիսանում շփոթելու աստիճանի նման հնչյունային առումով: Գրաֆիկական նմանությունը որոշվում է հետևյալ չափանիշներով՝ 1) ընդհանուր տեսողական տպավորությամբ, 2) օգտագործված տառանմուշների (շրիֆտի) տեսակով, 3) տառերի բնույթով պայմանավորված գրաֆիկական գրելաձևով (օրինակ տպագիր կամ ձեռագիր» մեծատառ կամ փոքրատառ» ոճավորումը և այլն), 4) միմյանց նկատմամբ տառերի դասավորվածությամբ, 5) այբուբենով» որի տառերով գրված է բառը, 6) գույնով կամ գունային համակցությամբ:

Որևէ հատկանիշի առկայությունը դեռևս չի նշանակում» որ ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման են» օրինակ» այն որ երկու նշանները օրինակ՝ «TIEZERQ» և «HOUSE» ապրանքային նշանները գրված են լատինատառ տառատեսակով, ուրեմն դրանք շփոթելու աստիճան նման են» նմանատիպ և այս դեպքում և այն» որ նշանները գրված են լատինատառ տառատեսակով և այբուբենով էական դեր չեն խաղում ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման համարելու համար:

Նշանները տեսողական առումով տարբերվում են» քանի որ մի նշանը հորիզոնական դիրքով գրված «ARARAT JUICE» արտահայտությունն է» որտեղ «ARARAT»-ը և «JUICE»-ը միասին են ընկալվում՝ տեսողական առումով» իսկ մյուսը «ARARAT» բառն է» որը գրված է կորածև» պետք չէ մոռանալ նաև վիճարկվող նշանի պատկերային մասի առկայության մասին» որոնց ամբողջությունը բացառում է շփոթության հնարավորությունը:

Իմաստային նմանությունը որոշվում է հետևյալ հատկանիշների հիման վրա՝ 1) նշանների մեջ դրված նման հասկացության» գաղափարի» մասնավորապես տարբեր լեզուներով նշանների համընկնող իմաստի, 2) նշանների տարբերից որևէ համընկնող տարրի» որն առանձին իմաստ ունի և որի վրա ընկնում է տրամաբանական շեշտադրումը, 3) նշանների մեջ դրված հասկացությունների» գաղափարների հակադրության:

Տվյալ դեպքում իմաստային առումով ևս շփոթությունը բացառվում է» քանի որ մի դեպքում «Արարատ» լեռան գաղափարն է» իսկ մյուս դեպքում՝ «Արարատ հյուր» կամ «Արարատի հյուր»

արտահայտությունը՝ որը նման գաղափար՝ ինչպիսին է Արարատ լեռը՝ չի պարունակում:

Վերոգրյալից ակնհայտ է՝ որ թեև երկու ապրանքային նշաններում առկա է «ARARAT» տարրը՝ սակայն դրանք շփոթություն չեն առաջացնում: Հետևաբար հայցվորի պնդումները՝ շփոթելու աստիճան նմանության վերաբերյալ, անհիմն են և վիճարկվող գրանցմամբ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ այն է՝ որպես ապրանքային նշան՝ գրանցման ենթակա չէ այն նիշը՝ որը՝ նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին՝ և դրանով մականշվող ապրանքների և/կամ ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մեջ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում՝ ներառյալ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդելը (շփոթելու աստիճան նմանությունը): Խախտում տեղի չի ունեցել:

Ավելին, «ARARAT» բառը պարունակող համակցված ապրանքային նշանը գրանցվել է նաև ԱԾՄԴ 29-րդ դասի՝ հատապտուղներ և բանջարեղենային պահածոներ ապրանքների համար՝ որոնք կարգի 106-րդ կետի համաձայն՝ նույնական կամ նույնատիպ ապրանքներ չեն՝ քանի որ «հյութ» նեկտար» մրգային ըմպելիքներ» օջարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր» ապրանքներ և «հատապտուղներ և բանջարեղենային պահածոներ» ապրանքները նույն սեռի ապրանքներին չեն դասվում՝ խանութում հիմնականում տարբեր բաժիններում են վաճառվում՝ պահածոները այլ բաժնում՝ իսկ հյութերը՝ մեկ այլ՝ և ընդհանրապես պահածոն՝ մրգային կամ մանավաղ բանջարեղենային՝ և հյութը՝ ըմպելիքը կամ օջարակը լրիվ տարբեր ապրանքներ են՝ ուստի սպառողը նույնիսկ շփոթելու աստիճանի նմանության առկայության դեպքում՝ չի կարծի, որ այդ ապրանքները նույն սուբյեկտի կողմից են արտադրվել:

Ուստի վիճարկվող գրանցման 29-րդ դասի ապրանքների համար գրանցումը չի կարող անվավեր ճանաչվել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի խախտման հիմքով:

Ղատապնությունը ընթացքում պատասխանողի ներկայացուցիչ Արայիկ Բաբայանը, ամբողջությամբ պնդելով վերը նշված փաստարկները, խնդրեց հայցը մերժել:

4. Երրորդ անձ «Արտաշես» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները.

Երրորդ անձի ներկայացուցիչներ Արևիկ Բաղդատյանը և Կարինե Պետրոսյանը սույն վարչական գործով հրավիրված նախնական դատական նիստում հայտնեցին, որ պնդում են պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխանում նշած հիմնավորումները:

02.11.2010թ. նշանակված դատական նիստի ժամանակի և վայրի մասին երրորդ անձ «Արտաշես» ՍՊԸ-ն պատշաճ կարգով ծանուցվել է: Վարչական գործը դատաքննության նշանակելու մասին ՀՀ վարչական դատարանի որոշումը՝ որում նշված է դատական նիստի ժամանակի և վայրի մասին, երրորդ անձը ստացել է փոստով /հիմք՝ հանձնման մասին անդորրագիր/: Ղատական նիստի ժամանակի և վայրի մասին երրորդ անձի ներկայացուցիչներ Արևիկ Բաղդատյանը և Կարինե Պետրոսյանը ծանուցվել են նախնական դատական նիստում: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ երրորդ անձի կողմից որևէ ներկայացուցիչ չի ներկայացել դատական նիստին, դատարանը, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածով, որոշեց գործը քննել երրորդ անձի բացակայությամբ:

5. Ղատաքնությամբ պարզված հանգամանքները.

- ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունը 02.03.2010թ. գրանցել է «ARARAT JUICE» բառային ապրանքային նշանը ԱՄՄԴ (ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման) 32-րդ դասի ապրանքների համար «հյութ» նեկտար» մրգային ըմպելիքներ, օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր» 09.02.2010թ-ի առաջնությամբ Սարգիս Թարվերոյանի անվամբ գրանցման համարը 15064:

- ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության կողմից 30.08.2010թ. գրանցվել է «ARARAT» բառը պարունակող համակցված ապրանքային նշանը ԱՄՄԴ 29-րդ դասի հատապտուղներ և բանջարեղենային պահածոներ» ու 32-րդ դասի մրգային հյութեր» ապրանքների համար» 25.05.2010թ. առաջնությամբ «Արտաշես» ՍՊԸ-ի անվամբ» գրանցման համարը 15985:

6. Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Լսելով կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, այդ թվում՝ վարչական վարույթի նյութերը, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը եզրակացրեց, որ հայցը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն. «Վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերության համաձայն. «Վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն», նույն հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն. «միջամտող վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը»:

Նշված իրավանորմերի վերլուծությամբ վարչական դատարանը գտնում է, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության 30.08.2010թ. թիվ 15985 գրանցման համարի տակ գրանցված ապրանքային նշանի գրանցման որոշումը հայցվորի համար հաղիսանում է միջամտող վարչական ակտ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն. «Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով»:

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ որպես ապրանքային նշան՝ գրանցման ենթակա չէ այն նիշը, որը՝ «2) նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մեջ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը (շփոթելու աստիճան

նմանությունը)»:

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ապրանքային նշանի գրանցումը կարող է անվավեր ճանաչվել դատարան ներկայացված համապատասխան հայցի կամ իրավունքների պաշտպանության գործով հակընդդեմ հայցի քննարկման արդյունքում կայացված դատարանի վճռի հիման վրա՝ եթե՝ առկա է սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ավելի վաղ ապրանքային նշան« և առկա են նաև նույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերից որևէ մեկով նախատեսված պայմանները: Վերոհիշյալ իրավանդությունների պահանջների համաձայն՝ վարչական դատարանը գտնում է, որ վիճարկվող որոշման իրավաչափությունը որոշելու համար էական նշանակություն ունի ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության 02.03.2010թ. որոշմամբ գրանցված «ARARAT JUICE» բառային ապրանքային նշանի և նույն գործակալության 30.08.2010թ. գրանցված «ARARAT» բառը պարունակող համակցված ապրանքային նշանի միջև, որպես ԱՇՄԴ նույն՝ 32-րդ դասում գրանցված ապրանքային նշանների, շփոթության աստիճան նմանությունը:

«Շփոթության աստիճանի նմանություն»-ը որոշվում է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 12.04.2005թ. «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման» ներկայացման և քննարկման կարգը հաստատելու մասին» թիվ 85-Ն հրամանի 1-կետով հաստատված կարգով (գրանցված է ՀՀ արդարադատության նախարարությունում 01.07.2005թ., պետական գրանցման թիվ՝ 10305240, ՀՀԳՆԱՏ 2005/19.1, 03.08.2005թ., հոդվ. 257.7):

Համաձայն նշված հրամանով հաստատված «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման» կարգի 97-100-րդ կետերի.

97. Բառային նշանների նմանությունը կարող է լինել ձայնային (հնչյունային), գրաֆիկական (տեսողական) և իմաստային (արտահայտած մտքի):

98. Ձայնային նմանությունը հիմնականում որոշվում է հետևյալ հատկանիշներով՝

1) համեմատվող նշաններում մոտ եւ համընկնող հնչյունների առկայությամբ.

2) նշանը կազմող մոտ հնչյունների մոտիկությամբ.

3) մոտ հնչյունների և հնչյունային կապակցությունների միմյանց նկատմամբ դասավորվածությամբ.

4) համընկնող վանկերի առկայությամբ և դրանց դասավորվածությամբ.

5) նշանի մեջ պարունակվող վանկերի ընդհանուր քանակով.

6) նշաններում համընկնող հնչյունային կապակցությունների տեղով.

7) ձայնավորների կազմի մոտիկությամբ.

8) բաղաձայնների կազմի մոտիկությամբ.

9) նշանների համընկնող մասերի բնույթով.

10) նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով, հատկապես բառային արտահայտությունների, այդ թվում՝ ֆիրմային անվանումների մեջ: Այս դեպքում համընկնող վանկերի առկայության կամ մի նշանը այլ նշանի մեջ մտնելու դեպքում նմանության ծագման որոշիչ գործոն է համարվում համընկնող մասերի սկզբնական դիրքը: Շատ դեպքերում նշանների նման ճանաչման հիմք կարող է հանդիսանալ ինչպես սկզբնամասերի, այնպես էլ վերջնամասերի համընկնումը՝ տարբեր միջնամասերի դեպքում.

11) շեշտադրությամբ:

99. Գրաֆիկական նմանությունը որոշվում է հետևյալ չափանիշներով՝

1) ընդհանուր տեսողական տպավորությամբ.

2) օգտագործված տառանմուշների (շրիֆտի) տեսակով.

3) տառերի բնույթով պայմանավորված գրաֆիկական գրելաձևերով (օրինակ՝ տպագիր կամ ձեռագիր, մեծատառ կամ փոքրատառ, ոճավորումը և այլն).

- 4) միմյանց նկատմամբ տառերի դասավորվածությամբ.
 - 5) այբուբենով, որի տառերով գրված է բառը.
 - 6) գույնով կամ գունային համակցությամբ:
100. Իմաստային նմանությունը որոշվում է հետևյալ հատկանիշների հիման վրա՝
- 1) նշանների մեջ դրված նման հասկացության, գաղափարի, մասնավորապես տարբեր լեզուներով նշանների համընկնող իմաստի.
 - 2) նշանների տարրերից որեւէ համընկնող տարրի, որն առանձին իմաստ ունի և որի վրա ընկնում է տրամաբանական շեշտադրումը.
 - 3) նշանների մեջ դրված հասկացությունների, գաղափարների հակադրության:

Վարչական դատարանը գտնում է, որ «ARARAT JUICE» ապրանքային նշանում «JUICE» բառը բավականին թույլ տարր է «քանի որ բնորոշում է ապրանքի տեսակ» այն է՝ հյութ (անզլերենից թարգմանաբար): Հետևաբար տվյալ ապրանքային նշանի տարբերակիչ հատկություն ունենալու առումով այն էական դեր չի խաղում: Այս մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ հայցվորի կողմից ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն ներկայացված հայտում հայտարկվող նշանի նկարագրությունը ևս նմանաբովանդակ է՝ «Ներկայացվում է բառային նշան՝ ARARAT JUICE պրտահայտությունը, որը թարգմանաբար նշանակում է արարատ հյութ»: Նշված ապրանքային նշանը գրանցվել է՝ հյութ« նեկտար» մրգային ըմպելիքներ» օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր» ըստ նշանների գրանցման ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման թիվ 32-րդ դասում: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «ARARAT JUICE» ապրանքային նշանը գրանցված է հենց ԱԾՄԴ 32-րդ դասի ապրանքների համար, ապա ակնհայտ է, որ նշված ապրանքային նշանում տարբերակիչ հատկության ծանրաբեռնվածությունը կրում է հենց «ARARAT» բառը, այսինքն, նշված ապրանքային նշանում շեշտադրությունը պարունակում է «ARARAT» բառը: «ARARAT» ապրանքային նշանն իր բնույթով հանդիսանում է համակցված նշան: Նշված ապրանքային նշանում «ARARAT» բառի հետ օգտագործված է նաև որոշակի պատկերային մաս՝ այն է՝ Արարատ սարի ուրվագիծը՝ ինչը որևէ կերպ չի ազդում ապրանքային նշանի ընկալելիության վրա և դրան չի հաղորդում որևէ այլ իմաստ կամ գաղափար, ոչ որպես առանձին կամ ինքնուրույն տարր, ոչ էլ «ARARAT» բառի հետ համակցության մեջ: Այսինքն նշած ապրանքային նշանում ևս հիմնական տարբերակիչ հատկության ծանրաբեռնվածությունը կրում է «ARARAT» բառը, հետևապես նշված ապրանքային նշանում ևս շեշտադրությունը պարունակում է «ARARAT» բառը:

Նշված երկու ապրանքային նշանների շփոթությանը էապես նպաստում է նաև օգտագործված այբուբենն ու տառատեսակը՝ որով գրված են այդ բառերը՝ երկու դեպքում էլ դրանք գրված են լատինական այբուբենի տառերով:

«ARARAT» ապրանքային նշանը, ըստ նշանների գրանցման ապրանքների և ծառայությունների դասակարգման, դասվել է ինչպես թիվ 32, այնպես էլ թիվ 29 դասին: ԱԾՄԴ 32-րդ դասի ապրանքների նույնատիպությունը, որոնց համար համապատասխանաբար գրանցվել են համեմատվող՝ «ARARAT» (մրգային հյութերի համար) և «ARARAT JUICE» (հյութ« նեկտար» մրգային ըմպելիքներ, օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր ապրանքների համար) ապրանքային նշանները, ակնհայտ է: Չնայած այն հանգամանքին, որ «ARARAT JUICE» ապրանքային նշանը գրանցվել է միայն 32-րդ դասի ապրանքների համար, այդուհանդերձ վարչական դատարանը գտնում է, որ «ARARAT» ապրանքային նշանը, «ARARAT JUICE» ապրանքային նշանի ավելի վաղ գրանցման ուժով չէր կարող գրանցվել նաև ԱԾՄԴ 29-րդ դասի ապրանքների համար, քանի որ

ԱԾՄԴ թիվ 29 դասը հատապտղային և բանջարեղենային պահածոներն են: Ըստ էության հարակից ապրանքներ են, քանի որ վերոնշյալ գրանցումներում նշված ինչպես 32-րդ, այնպես էլ 29-րդ դասի ապրանքների հոււմքը նույնական է, նույն պտուղը երկու դեպքում էլ կարող է օգտագործվել որպես հոււմք՝ երկու դեպքում էլ դրանց իրացումն իրականացվում է սպառման նույն ցանցում և դրա նույն բաժիններում որպես հարակից ապրանքներ: Այսինքն, ԱԾՄԴ 29-րդ դասի նշված ապրանքները, որոնց համար գրանցվել է «ARARAT» ապրանքային նշանը, նույնատիպ են տվյալ դեպքում ԱԾՄԴ 32-րդ դասի այն ապրանքներին, որոնց համար գրանցված է «ARARAT JUICE» ապրանքային նշանը:

Վերը նշվածի հիման վրա վարչական դատարանը գտնում է, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության կողմից «Արտաշես» ՍՊ ընկերության անվամբ «ARARAT» ապրանքանիշի թիվ 15985 համարի տակ գրանցումը կատարվել է «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթների խախտմամբ, այդ թվամ օրենքի սխալ կիրառմամբ՝ ուստի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ այն պետք է ձանաչել անվավեր: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով լուծելով դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման հարցը՝ դատարանը եզրակացրեց, որ պատասխանողից հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման վերջինիս կողմից վճարված 4.000 դրամ պետական տուրքի գումարը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 112-115-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով և ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ կետով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Սարգիս Թարվերոյանի հայցն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «Արտաշես» ՍՊԸ՝ 30.08.2010թ. թիվ 15985 գրանցման համարի տակ գրանցված ապրանքային նշանի գրանցումն անվավեր ձանաչելու պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ձանաչել ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության կողմից 30.08.2010թ. թիվ 15985 գրանցման համարի տակ գրանցված ապրանքային նշանի գրանցումը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունից հօգուտ Սարգիս Թարվերոյանի բռնագանձել 4.000 դրամ՝ որպես պետական տուրքի փոխհատուցում:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ ՀՀ վճռաբեկ դատարան:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ ՔՐԻՍՏԻՆԵ ՄԿՈՅԱՆ

_____ -ին վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

	ԴԱՏԱԿՈՐ ՔՐԻՍՏԻՆԵ ՄԿՈՅԱՆ
Դատական ակտի ամսաթիվը:	05-11-2010
Ակտով հոգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ.:	0
Ամսաթիվ:	06-12-2010
Այլ նշումներ:	
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	11-02-2011
Էջերի քանակը:	90
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	15-02-2011
Էջերի քանակը:	90
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	